ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/12467-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1. «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2.Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 306-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առարկություններ չունի:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետով սահմանվում է, որ շահումով խաղերի, խաղատների գործունեության կազմակերպիչը պարտավոր է չիրականացնել շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների գովազդը, այդ թվում՝ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կամ համացանցով, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքը (այսուհետ՝ օրենք) ընդունվել է 2024 թվականի հուլիսի 1-ին, որի 58-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն.

«Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված օրվանից ուժը կորցրած ճանաչել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքը և «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքը:», իսկ օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի՝ սույն հոդվածի 3-րդ մասում չնշված դրույթները գործողության մեջ են դրվում սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրը:»

Վերոգրյալը հաշվի առնելով՝ հարկ է նկատի ունենալ, որ մինչև նախագծի ուժի մեջ մտնելը «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով օպերատոր սահմանված չլինելու պարագայում կառաջանա հակասություն «Գովազի մասին»

օրենքի և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի միջև, հետևաբար առաջարկում ենք դիտարկել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակահարմարության հարցը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասում հանել «,Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաեւ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին եւ չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների» բառերը:

Հոդված 2. Եզրափակիչ մաս

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» « ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է խաղային գովազդների տեղակայման սահմանափակման անհրաժեշտությունից, մասնավորապես՝ նախագծերով նախատեսվում է արգելք սահմանել Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտներում շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի գովազդի տեղադրման համար:

2024 թվականի հուլիսի 1-ին ընդունվել է «Խաղային գործունեության մասին» օրենքը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության խաղային գործունեության կարգավորման միջոցով խաղացողների շահերի պաշտպանությունը, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ և խաղային արտադրանքների մասով միջազգային չափորոշիչներին համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջների սահմանմամբ խաղային գործունեության նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացումը, խաղային գործունեության կարգավորման ոլորտում իրավահարաբերությունների հստակեցումն է: Նշյալ օրենքը նախատեսում է անցումային դրույթ, համաձայն որի՝ Օրենքով սահմանված ժամկետում ուժը կորցրած կճանաչվեն «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն և «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-Յ-Ն օրենքները:

«Խաղային գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ 11. Խաղային գործունեության կազմակերպիչն ապահովում է՝ «Գովազդի մասին» օրենքի պահանջների կատարումը:

Միաժամանակ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածը նախատեսում է ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները, որի 15-րդ մասը սահմանում է շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խարի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի գովազդի տեղադրման սահմանափակումները՝ բացառություն սահմանելով Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվող գովազդների համար:

Վերոհիշյալի համատեքստում, վերջին ժամանակներս սահմանային անցակետերում, ինչպես նաև 4 և բարձր աստղանի կարգին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում գովազդային վահանակների վրա տարբեր խաղային բիզնեսների, խաղատների, շահումով խաղերի հեռարձակվող գովազդի նկատելի և գերակշռող աճ է նկատվում: Ստացվում է մի իրավիճակ, երբ զբոսաշրջիկը մուտք է գործում երկիրհենց օդանավակայանում կամ սահմանային անցման այլ կետերում ստանում է բացասական ազդակներ՝ ձևավորելով Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մասին ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ինչը **ամրապնդվում է** հյուրանոցային տնտեսության օբյեկտներում: Արդյունքում ստվերում են մնում ազգային արժեքները և այն իրականությունը, որ Հայաստանը մի երկիր է, որն իր հազարամյա պատմությամբ, տեսարժան վայրերով, բարի ու հյուրասեր մարդկանցով, յուրահատուկ կոլորիտով ու մթնոլորտով կարող է դասվել աշխարհի լավագույն զբոսաշրջային երկրների շարքին, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում Հայաստանի՝ որպես բարենպաստ, գրավիչ, անվտանգ և ապահով զբոսաշրջային երկրի նկարագրի ամրապնդման գործընթացի վրա:

Ամբողջ աշխարհում զբոսաշրջությունը նպաստում է ներդրումների ներհոսքին, ենթակառուցվածքների զարգացմանը, համաչափ տնտեսական զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը, միջմշակութային հաղորդակցմանը, միջազգային համերաշխությանն ու խաղաղության ամրապնդմանը: Բազմաթիվ երկրներում, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունը տնտեսության գերակա ճյուղ է: Հետևաբար, հաշվի առնելով միջազգային համագործակցության դիվերսիֆիկացման, պատասխանաու զբոսաշրջության հիմնարար դերն ու նշանակությունը, զբոսաշրջության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության նպատակն է կայուն զբոսաշրջության զարգացման միջոցով նպաստել հայկական պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանը, հանրահռչակմանն ու խթանմանը, Հայաստանի և հայ ժողովրդի համաշխարհային ճանաչելիության, հեղինակության ու հարգանքի ամրապնդմանն ու շարունակական բարձրացմանը, Հայաստան՝սփյուռք կապերի ու հայապահպանության ամրապնդմանն ու զարգացմանը, մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության ապահովմանն ու զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, բարելավմանը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը: Ելնելով վերոգրյալից՝ ձևավորվել են Հայաստանի զբոսաշրջության զարգացման առաջնային ուղղությունները՝ մշակութային, գաստրո (խոհանոց և գինի), արկածային (ներառյալ ձմեռային): Չնայած առանձնացված ուղղությունների առկայությանը՝ Հայաստանը ունի լուրջ հնարավորություններ և անհրաժեշտ նախադրյալներ նաև այլ ուղղությունների զարգացման նպատակով՝ գյուղական (ագրո) զբոսաշրջություն, ՄԱՅԱ (MICE) զբոսաշրջություն, բժշկական և առողջարանային
զբոսաշրջություն և այլն: ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի տարեկան ծրագրերով
նախատեսված բյուջեի հիմնական ու գերակշիռ մասը ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի դերի՝ վերոգրյալ ուղղություններով համաշխարհային զբոսաշրջային շուկայում ամրապնդմանը և Հայաստանի՝ որպես հազարամյա պատմությամբ, մշակույթով, անաղարտ բնությամբ, համեղ խոհանոցով, բազմազան զբոսաշրջային փորձառություններով հարուստ երկրի նկարագրի ձևավորմանը:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ գովազդի տեղադրումը սահմանային մուտքի տարածքում շատ կարևոր դեր կարող է ունենալ ինչպես երկրի զբոսաշրջային ոլորտի, այնպես էլ տեղական բիզնեսների առաջխաղացման համար: Այն նպաստում է առաջին տպավորության ձևավորմանը և խաթարում երկրի զբոսաշրջային գրավչությունը: Այսինքն, խաղային գովազդների տեղադրումը պետք է լինի խիստ վերահսկված և տեղադրված միայն այնպիսի վայրերում, որտեղ այն չի խախտում հասարակության շահերը կամ չի հանգեցնում բացասական հետևանքների: Ուստի անհրաժեշտություն է առաջանում վերահսկել և կարգավորել գովազդի տեղադրումը՝ հաշվի առնելով հասարակության շահերը, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մասին պատշաճ տեղեկատվության հանրահռչակումը և սոցիալական պատասխանատվությունը:

Միջազգային փորձը

Իսպանիան առաջնորդվում է գովազդի տեղադրման հիմնական սկզբունքների վրա, այն է՝

1. Երկրի բրենդավորումը և տուրիզմի խթանումը

• Զբոսաշրջային վայրերի, մշակութային իրադարձությունների և ազգային խորհրդանիշների մասին գովազդը նպաստում է երկրի դրական ընկալմանը:

• Օրինակ՝ «Welcome to Spain[1]» տեսակի գովազդները կարող են ընդգծել հայտնի վայրերը, ինչպիսիք են Բարսելոնան, Մադրիդը կամ Սևիլիան:

2. Տեղական բիզնեսների աջակցությունը

• Սահմանային անցակետերում տեղադրված գովազդները կարող են խթանել հյուրանոցները, ռեստորանները, տուրիստական գործակալությունները, տրանսպորտային ծառայությունները և այլն:

• Օրինակ, «Best local tapas in Barcelona - Try now!» գովազդը կարող է խրախուսել զբոսաշրջիկներին այցելել կոնկրետ հաստատություն:

3. Ապրանքանիշերի միջազգային առաջխաղացում

https://thebrooklyniteabroad.com/welcome-to-spain-al4042/

• Խոշոր բրենդները, որոնք ցանկանում էն գրավել միջազգային հաճախորդների ուշադրությունը, կարող են օգտագործել սահմանային գոտիները որպես արդյունավետ գովազդային հարթակ:

• Օրինակ, սահմանային մուտքի կետերում հաճախ կարելի է տեսնել շքեղ ապրանքանիշերի գովազդներ, որոնք թիրախավորում են բարձր եկամուտ ունեցող զբոսաշրջիկներին:

Իտալիայում շահումով խաղերի գովազդի վերաբերյալ կարգավորումները բավական խիստ են՝ նպատակ ունեն պաշտպանել հասարակության խոցելի խմբերին և կանխել խաղամոլության տարածումը: 2018 թվականին ընդունված «Dignity Decree» (Decreto Dignita)[1] օրենքով ամբողջությամբ արգելվել է շահումով խաղերի գովազդը բոլոր ձևաչա փերով՝ ներառյալ հեռուստատեսությունը, ռադիոն, համացանցը և սպորտային միջոցառումները: Այս արգելքը տարածվում է նաև հանրային բոլոր վայրերի վրա, ներառյալ հյուրանոցները և սահմանային մուտքի կետերը, ինչպիսիք են օդանավակայանները, երկաթուղային կայարանները և ՝ այլ սահմանային անցակետերը:

Խախտումների դեպքում նախատեսված են խիստ պատժամիջոցներ, ներառյալ բարձր տուգանքներ ինչպես գովազդատուների, այնպես էլ գովազդային ծառայություններ մատուցողների համար:

Նորվեգիայի «Խաղերի մասին ակտի» (Lotteri og Stiftelsestilsynet)[2] օրենքը արգելում է շահումով խաղերի գովազդը բոլոր հանրային վայրերում, ներառյալ սահմանային մուտքի կետերը և հյուրանոցները:

Լեհաստանի «Խաղերի մասին ակտի»[3] համաձայն՝ վիճակախաղերի, «խաղաթղթային» խաղերի, մեքենայացված խաղերի և խաղադրույքների գովազդն ընդհանրապես արգելվում է: Նշյալ խաղերը հնարավոր է գովազդել բացառապես նման խաղերի անցկացման վայրերի ներսում[4]:

Էստոնիայում, Աատվիայում և Լիտվայում[5] շահումով խաղերի գովազդն ընդհանրապես արգելվում է:ինչպես [7]

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագիծը մշակվել է Աժ պատգամավոր Նարեկ Ղահրամանյանի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կանոնակարգել խաղային գովազդների տեղադրման հետ կապված հարաբերությունները:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

---

[1] I**Wps:/A.vw**w.nortanrcisefulbr)ght.com**/en-it/knQwledge/public**a**tions/4bf546fl/dignitv-decree-final-text-has-bee**n-**approved**

https://uk.practical law. thomsonreuters.com/9-635-0422?transitionType=Default&contextData=(sc.Default) Gaming **in Norway:** overview, Practical Law **Country** Q&A 9-635-0422 (2016)

[3] https://iclg.com/practice-areas/gambling-laws-ancl-regiilations/poland

' http; \vsvw.paih.gov.pl/po!ish_law/advertising#4e

[4] **imp:** 'www.asser.nl/SportsLaw/Blog/post/gambling-advertising-regulations-pitfalls-tbr-sports-sponsorship-by-ben-van-rompuy

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագծի ընդունումը չի բխում է Կառավարության 2021-2026թթ. Ծրագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 306-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.04.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ